Տիբէթ, Աւստրալիական կղզիք, Ճապոնիա և այլն. և այս ազգերն ու երկիրները հետազոտող ճանապարհորդներին ամեն տեսակ դիւրութիւն տալիս է և նիւթական ապահովութիւն. ո՜րքան ևս աւելի նորա սրտին մօտիկ պիտի լինին և հետաքրքրական իւր հպատակ ազգերի և երկիրների կեանքի ուսումնասիրութիւնը, նոցա անցեալն ու ներկայն իրանց հասարակական, կրօնական, մտաւոր և ընտանեկան կեանքի բոլոր ճիւղերով. Այս այսպես լինելուց յետ քաղցր է յուսալ՝ որ պ. հոգաբարձուի միջնորդութիւնը Թիֆլիզի քաղաքային խորհրդարանի առաջարկութեան մասին բարեյաջող ելք կունենայ.

---

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Ի 19 Դեկտ. Ելիսաւէտապօլցի հանգուցեալ բարեպաշտ հայազգի Սիմէօնն Զօմախլեանց կտակեալ է մի մի հարիւր րուբլի Սրբոց Աթոռոցն Էջմիածնի և Երուսաղէմի, զորս Սրբազան Սինօդն ստանալով ի ձեռն հոգևոր կառավարութեան տեղւոյն յայտարարութեամբ ի 29 Հոկտ. համարաւ 741. տնօրինեաց զարժանն: Աստուած լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն և զնուէրս նորա ի հաճոյս իւր ընկալցի:

—

Ի 23 Դեկտ. Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Բէսարաբիոյ և Նոր Նախիջևանի խնդրեալ է ի Սրբազան Սինօդէն հրահանգութիւն, յայտարարութեամբ ի 17 Հոկտ. տարւոյս համարաւ 2587, թէ կարե՞ն արդեօք օտարադաւան քրիստոնեայք կատարել զպարտաւորութիւնս խաչակալաց և կամ կնքահարց ի ժամանակս պսակաց և մկրտութեանց ժողովրդականաց մերոց. որում և Սրբազան Սինօդն պատասխանեալ է, թէ՝ Որովհետև կնքահայրն համարի առաջի Աստուծոյ, ըստ կանոնաց սրբոյ Եկեղեցւոյս՝ երաշխաւոր մկրտելոյն և դաստիարակիչ, ի քրիստոնէական հաւատս և ի ծէսս. և զի օտարազնեայ քրիստոնեայք ունին զբազում խտրութիւնս ի նոսին ի մէնջ՝ վասնորոյ, ոչ է պատշաճ կատարել նոյնպիսեաց զպաշտօն կնքահայրութեան մանկանց մերս Եկեղեցւոյ: Իսկ վասն կատարելոյ օտարադաւան քրիստոնէից զպարտաւորութիւնս խաչեղբարց ի ժամ պսակման՝ ոչ գնէ արգելս, զորոց և շրջաբերականաւ ծանուցեալ է հոգևոր Ատենից ի հրահանգութիւն:

—

Յ30ն Դեկտ. Սրբազան Սինօդն ունելով պատճառ զչհասական աններելի պսակակատարութիւն Պօղոս քահանայի Տէր Պօղոսեան Եաղուբլու գեղջ Փամբակու, որ պսակեալ է զնոյն գիւղացի Գրիգորն Պետրոսեան ընդ սանամօրն իւրում. և ընդ նմին ստուգելով ի ձեռն հոգևոր կառավարութեանն Ալէք-

սանդրապօլու, զի նոյն քահանայն բազմիցս գտեալ է սրտմտազանց և յանցաւոր ի կոչման իւրում, և քանիցս խրատեալ և պատժեալ է զի զգաստասցի և հրաժարեսցի ի գայթակղական վարուց և յանվայել արարմանց իւրոց, սակայն նա մնաց անուղղելի, և լինի առիթ գայթակղութեանց, անվայել և աններելի ընթացիւքն իւրովք. վասնորոյ և հրամանաւ գրեալ է Վիճակային Կոնսիստորիային Հայոց Երևանայ, զրկել զնա իսպառ ի քահանայական աստիճանէ ի խրատ և ի զգուշութիւն այլոց. և զվերոյիշեալ ապօրինի պսակն նորին համարել անվաւեր, զայրն տալով ի դատ քաղաքական դատարանին, իսկ զկինն ենթարկելով եկեղեցական միամեայ ապաշխարանաց:

—

յ30ն Դեկտ. Բագուաբնակ Պ. Գէորգն Թումասեան Միրզաբէկեանց ընծայելով զմի հատ միջնադարեան մեծադոյն հին Դաշոյն Թանգարանին Սրբոյ Աթոռոյս, յայցելութեան Նորին Վեհափառութեան անդր. և Պ. Դանիէլն Ղազիեանց, նոյնպէս Բագուաբնակ՝ զփորագրեալ պատկեր Կայարանին երկաթուղւոյ Բագուայ քաղաքի, յընկուզենի տախտակի՝ առաքեալ են ի Սրբազան Սինոդն, որ ստանալով զնոյնս, շնորհակալութեամբ զդաշոյնն եդ ի Թանգարանն Սրբոյ Աթոռոյս, իսկ զպատկերն ի Մատենադարանն:

—

յ30ն Դեկտ. Սրբազան Սինոդն ստուգելով ի ձեռն Վիճակաւորին Աստրախանայ, զի Աբրահամ քահանայն Տխինեանց Պետրովսկւոյ, ըստ գրաւոր բացատրութեան իւրոյ՝ ի կատարելն զհոգեհանգիստ վասն հանգուցեալ Ցակոբայ Մելիք Ցակոբեան Թաֆի, ի 29 Մայիսի անցելոյ ամի, յեկեղեցւոջ սրբոյն Սահակայ և Մեսրովբայ նոյն քաղաքի՝ բազմեցուցեալ է ի շարս դիազարդիցն հոգեհանգստեան անդէն եկեղեցւոջն ի վերայ առանձին սեղանոյ, նաև զպատկեր նոյն հանգուցելոյն, եդեալ ի մէջ պսակի. և համարելով Սրբազան Սինոդն զնոյնպիսի անվայել գործողութիւն նորին ընդդէմ կանոնաց եկեղեցւոյ՝ սնոտիապաշտութիւն և մոլորեցուցչութիւն ժողովրդեանն՝ արգելել զնա ի քահանայագործութենէ, արկանելով ընդ երկամեայ ապաշխարութեամբ, ի սուրբ Գէորգ ուխտատեղւոջն Ղզլարու: Հրամանագրելով շրջաբերականաւ՝ Վիճակային Ատենից Ռուսաստանու, արգելուլ քահանայից իւրաքանչիւր վիճակաց չվստահանալ երբէք գործել նմանօրինակ սխալանս և մոլորեցուցանել զժողովրդականս այսպիսի սնոտիապաշտութեամբք. զի պսակիչն հոգւոց ննջեցելոց մերոց է ինքն Քրիստոս՝ ըստ հաւատոյ և գործոց իւրաքանչիւրոյ: